

Հայտարարություն

ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ -ը ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնների համար

1. Բժիշկ-օրդինատոր /բժիշկ-նյարդաբան/ -- 0.5 հաստիք
2. Բժիշկ-օրդինատոր /բժիշկ-ստոմատոլոգ/ --0.5 հաստիք
3. Բժիշկ-օրդինատոր /բժիշկ-մաշկաբան/--0.5 հաստիք
4. Բժիշկ-օրդինատոր /բժիշկ-քիթ-կոկորդ-ականջաբան/--0.5 հաստիք
5. Բժիշկ-օրդինատոր /բժիշկ-վարակաբան՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կառավարման ոլորտի որակավորմամբ/-0.5 հաստիք
6. Բժիշկ-օրդինատոր /բժիշկ-ներզատաբան/--0.5 հաստիք
7. Բուժքույր--28 հաստիք

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի նշված պայմաններին

1. բժիշկ մասնագետների համար՝ բարձրագույն բուհական և հետբուհական կրթություն համապատասխան մասնագիտությամբ, իսկ միջին բուժանձնակազմի՝ միջին մասնագիտական կրթության առկայություն

2. բժշկական էթիկայի կանոնների իմացություն

3. տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

1. դիմում (լրացվում է տեղում)

2. լուսանկար 3x4չափի

3. քաղվածք աշխատանքային գրքուկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում)

4. ինքնակենսագրություն

5. անձնագրի, միջին մասնագիտական, իսկ բժիշկ մասնագետի թափուր պաշտոնի մրցույթի դեպքում բարձրագույն բուհական և հետբուհական (ուժ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ՝ ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա) կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի պատճենները և բնօրինակները

6. արական սեռի անձիք՝ նաև զինգրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը

7. օտարերկրյա քաղաքացիները՝ ՀՀ կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կձանոթանա այն իրավական ակտերի ցանկին ,որից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից սկսած է ք. Աբովյան, Արզնու խճուղի թիվ 10 հասցեում, ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ գործերի կառավարման բաժնում ամեն աշխատանքային օր ժամը 10:00-ից-15:00:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 11.10.2017թ:

Մրցույթը տեղի կունենա 2017թ հոկտեմբերի 20-ին ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում ժամը 12:00-ին:

Տեղեկությունների համար զանգահարել 098 57 55 91:

Միաժամանակ տեղեկացվում է,որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: